ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. փետրվարի 9 -ին, N 25 –Ա ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԴԱՎԹԱՇԵՆԻ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՐԱՉՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 222-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ հոդվածով, 226-րդ հոդվածով, 227-րդ հոդվածի 1-ին մասով, 228-րդ հոդվածով և հիմք ընդունելով այն, որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունում «Դավթաշենի Ա.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի շինվերանորոգման աշխատանքների գնման փաթեթի 19.01.2023թ-ին կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ նույն ՊՈԱԿ-ի տնօրեն Հ. Կարապետյանի /պատվիրատու/ և «Մեվրիկար» ՍՊԸ-ի /կապալառու/ միջև 2022թ-ի դեկտեմբերի 7-ին կազմվել է հանձնման-ընդունման թիվ 4 արձանագրությունը, որի հիման վրա կապալառու կազմակերպությանը կատարվել է համապատասխան վճարում այն դեպքում, երբ նույն արձանագրության հիմք հանդիսացող կատարողական ակտում բացակայել է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գնման պայմանագրի կողմ հանդիսացող «Վահրամ Կնյազյան» ԱՁ-ի ստորագրությունն ու կնիքը, ինչը վկայել է տվյալ կատարողական ակտում արտացոլված շինարարական աշխատանքների ծավալային չափերի ու հաշվարկների ստուգման բացակայության մասին, որպիսիք լինելու դեպքում միայն պետք է կատարվեր վճարումը կապալառուին, և որի

պայմաններում խախտվել է վերը նշված ծառայության մատուցման գնման պայմանագրի հավելվածով նախատեսված պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով նշված խախտման մեջ ՊՈԱԿ-ի տնօրենի մեղքի աստիճանն ու այդ կապակցությամբ տրված բացատրությունը, որոշում եմ.

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Դավթաշենի Ա.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հրաչուհի Կարապետյանին հայտարարել նկատողություն՝ աշխատանքային կարգապահության խախտման հիմքով:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Կարապետյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հ.Կարապետյանին տեղեկացման օրվան հաջորդող օրվանից և այն ենթակա է բողոքարկման՝ նշված օրվանից մեկամսյա ժամկետում:

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/9/2023 15:24:00 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ